

ԾԱՂԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՐԲԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Ա. Շրջան, Թիւ 51

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Արագիլ-Մամուն բռները (պատկերով)	ՅԱԿՈՒ ՏԷՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆ
Ծծկան որբուկը	ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ
Տասնոց մը իճնչախ բաժնեյու է	ԶԱՊԷԼ ԶԱԲԱՐԵԱՆ
Աբարածի մը հառաչանքը (պատկերով)	ՄԿՐՏԻԶ ՊԱՐՍՍՄԵԱՆ
Բաղդ եւ զործ (անգլիերէնէ)	Մ. ԲԱՐԹԻԿԵԱՆ
Մողեք (պատկերով)	
Ընդդիմարան զան	
Պիսակուած կապը (թերթօն)	ԳՕՆԸՆ ՏՕՅԼ

Հանելուկ, Հառուական հարցում, ելն.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՏՈՅ ԵՒ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 30 դրուչ: Վեցամսեայ բաժնեզին չկայ:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ Տարեկան 7 ֆրանք:

ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ

Բաժնեզինները կարելի է ղրկել Օսմ. մանտաբօսթով, փոխ՝ գրով, եւ կամ դրոշմաթուղթով (20 հատը 20 դրուչի հաշուով):

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար ղիմել մի՛ միայն՝

Ս Ա Դ Ա Ն Ա Ն Ի

{زاغيك غزته سي} درعليه ده غلطه ده قورشونلي خاتمه نومرو ۷

«Ծ Ա Ղ Ի Կ» Հ Ա Ն Դ Է Ս

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրչունլու խան, Թիւ 7

REVUE "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N° 7.

Գին 20 փարա

Տպագրութիւն ՍԱԳԱՆԱՆ, Կալաթա



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ԼԵՏԵԻՍԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարեալ չըլլար՝ առանց գոյնի, մաքրութեան: Բոլոր այն տիկիները որոնք հոգը ունին այս թանկագին ձիրքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն ամանագին արտադրութիւններուն որոնք շունդալից ուէքլամներով ծախու կը հանուին Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներելի կ'ընէ այդքան աժան ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օգին մէջ կ'չորնան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ձարպեր որոնք կ'ծթոին և քիչ ատենէն առաջ կ'ըրեն անդարմանելի կարմրութիւններ և խորշոմներ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի Կլիստօֆիով բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր:

1900ի տիեզերական Արուեստահանդէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ստոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն ազնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կ'խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Ինչաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիշին և յաւէտ երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր զբոցոհիները պիտի պառաւնան՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ:

ՇԱՂԻԿ

Տնօրէն Ս Ա Գ Ա Ե Ա Ն

Խմբագիր Գալոյր Տէր. Գալոյրեան

(723) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 51

1 ՄԱՅԻՍ 1908

ԱՐԱԳԻԼ-ՄԱՄՈՒՆ ԹՈՌՆԵՐԸ

(Հ Է Կ Ե Ա Թ)

ԱՐԱԳԻԼ-ՄԱՄՈՒՆ ԹոՌները չէք ճանչնար դուք : Արագիլ-Մամն ալ չէք գիտեր : Արագիլ-Մամը ժամանակին գիւղի մը մէջ սարսափի առարկան էր : Մայրերը իրենց զաւակները անով միայն կը վախցնէին : Անառակութիւն մը ընելնուն պէս, ահա կ'ըսէին .

— Արագիլ-Մամը հիմա կու գայ քեզի կը տանի :

Ո՞վ էր Արագիլ-Մամիկը : Հիմա մայրիկները Սատանան, Դեւ կամ Ալապուճուկը իրենց օգնութեան կը կանչեն, այն ատեն ալ Արագիլ-Մամիկը կը կանչէին :

Լեւ և Ճեւ երկու անառակ տղաքներ էին : Տակաւին շատ պզտիկ, բայց կարելի չէր զանոնք զսպել : Պահ մը առաջ երբ հոս կը խաղային, մէյ մըն ալ տեսնես սեղանին վրայ են ելեր տակն ու վրայ կ'ընեն . քիչ մը ետք ահա կը տեսնես որ իրենց հորթուկին պոչին տապակ մը կապած կը վազցնեն զայն, փիփիկը կը տանին շունին վրայ կը նետեն, դրացիին էշուն ճիտէն կարիճներ կը կախեն . . . Դեռ ո՞ր մէկը ըսեմ :

Իրենց խեղճ մօրը հոգին բերանը կու գար . ծեծ , սաստ , աղաչանք ապարդիւն : Հիմա կը հանդարտէին , քիչ մը ետք սկսելու համար նորէն , աւելի՛ սաստկութեամբ : Այս պզտիկները բանէ մըն ալ չէին վախնար , ա՛յնքան յանդուզն էին : Պարտէզին ցած պատին եգերքը կ'ելլէին և փռա՞ք գետին կը նետուէին , կրակ կրակարան չէին ճանչնար , խառնիխուռն կը տապալէին , կենդանիներուն խաճնելէն կամ կից տալէն ալ չէին սարսափիր : Ամէն օր , ամէն ժամ մէյմէկ վէրք , մէյ մէկ ցաւ կ'ունենային իրենց վրայ , բայց դարձեալ իրենց ընելիքը կ'ընէին :

Միայն , գիշերը մութին մէջ , երբ մայրիկը կ'ըսէր թէ « Հիմա՛

Արագիլ-Մամը կը կանչեմ՝ միայն ասկէ՛ կը վախնային։ Ո՛վ էր Արագիլ-Մամը, ի՞նչ էր. չէին գիտեր. տեսած ալ չէին, բայց քանի որ մայրիկը ճարահատ անոր կը դիմէր, ուրեմն սոսկալի, սոսկալի՛ մէկն էր։

Կը վախնային, բայց կ'ուզէին ալ տեսնել զայն։ Ա՛խ, մէյ մը տեսնային... Կը մտածէին որ այդ Մամիկը հարկաւ ինք ալ զաւակներ թոռներ ունի, իրենց պէս պղտիկ մանչուկներ... հետեւաբար Մամիկը իրենց չպիտի վըասէր. իր տունը պիտի տանէր և հոն իրենք արագիլ-թոռնիկներուն հետ պիտի խաղային կամ պիտի կուռըտէին. — ի՞նչ, իրենք ծեծէ կուէ՞ կը վախնային։

Այսպէս, օր մըն ալ երբ խոշոր անառակութիւն մը ըրեր էին մայրիկը դարձեալ Արագիլ-Մամիկին սպառնալիքը ըրաւ։ Այն ատեն լև և ձեւ պօռացին.



— Տո՛ւր, մեզի Արագիլ-Մամին տուր... թող Արագիլ — Մամը տանի մեզի... —

Մայրը՝ վախցնելու համար այս փորձանքները, տարաւ զանոնք հաւնոցին քովը մութ մէկ անկիւնը դրաւ և ըսաւ.

— Սպասեցէք, հի՛մա կու գայ, կը տեսնաք Արագիլ-Մամը։

Երկու եղբայրներ մութ գիշերին մէջ իրար գրկեցին. սկսան դողալ։ Յանկարծ թեթեւ ոտնաձայն մը լսեցին։

Երկար կտուց մը երկարեցաւ դէպ ի իրենց, շատ երկար։ Ճաղատ, պղտիկ գանկ մը՝ որուն վրայ լաթ մը կապուած էր. ծածկոցին և

զերքէն կը փայլէին բաւական խոշորիկեկ աչուրներ: Արագիլ-Մամն էր. ան բացաւ իր երկար բերանը և ժուտտ ակուսայիկ ջատուկի մը պէս կափկափեց:

— Ինձի ուզեր էիք. ահա՛ եկայ. եկէ՛ք նայում ձեզի տանիմ ազէկ մը խաշեմ:

Լև և ձեւ դողացին: Աւելի՛ իրարու փաթտուեցան ու հեծեծեցին:

— Չէ՛ Արագիլ-Մամ, մենք չէինք... մենք մեր մայրիկին քովը պիտի երթանք... մենք մեր մայրիկին քովը պիտի երթանք...

— Չէ՛, չէ՛, ձեզի պիտի տանիմ խաշեմ, տաք տաք ջուրերու մէջ եփեմ որ կակուղ կակուղ ուտեմ (գոչեց Մամիկը իր նոյն գէշ շեշտովը): Ես հայրիկ մայրիկ մտիկ չեմ ըներ. ա՛լ անոնք կարողութիւնն չունին ինձի վաճառելու:

Ասոր վրայ երկու պզտիկները որոնց վայրկենական վախը անցած էր, գոչեցին:

— Մենք քենէ չե՛նք վախնար, մեզի կրակն ալ նետես չե՛նք վախնար, դուն ո՞վ ես, պառա՛ւ դուն ալ...

Պը՛... Մամիկը զայրացաւ և իր փետուրները թօթուեց:

— Դուք ինէ չէ՛ք վախնար մի՛... Հի՛մա ձեզի կը սուլբեցնեմ:

— Չէ՛, չե՛նք վախնար. ի՞նչ կ'ընես որ. դուն ի՞նչ ունիս. նայէ՛ մենք թեւեր ունինք կուռելու համար, սուր ակուսներ՝ խածնելու համար, գլուխներ՝ հարուած տալու համար... ոտքեր՝ վազելու համար... ալ քենէ ի՞նչ պիտի վախնանք:

— Եկէ՛ք սա կողովին մէջ որ հասկնաք:

Եւ, ինչպէս եղաւ, Լև և ձեւ կողովի մը մէջ մնացին: Մամիկը կուռակը նետեց այդ կողովը և սկսաւ երթալ:

Հիմա պզտիկները ապշած էին: Գետնէն բարձր էին, կարծես օդին մէջ կը շարժէին: Արագիլ-Մամը թէ՛ թեւերով կը թռէր և թէ՛ երկար ոտքերով կը վազէր. այնչափ արագ կը վազէր որ պըզտիկները արդէն սարսափած՝ կ'զգային թէ գլուխնին կը դառնայ: Ու հոն թմրած ինկան:

Առտուն Լև և ձեւ երբ իրենց աչուրները բացին, զարմանքով տեսան որ իրենց գիւղին մօտերն էին: Հասկցան թէ բան մը չկայ ու աւելի ապահով ըսին:

— Ո՛ւր է, Արագիլ-Մամ, մեզի քու տունդ պիտի տանէիր, պիտի եփէիր...

Մամիկը այս անգամ աւելի հանդարտ, կարծես գորովալից կերպով գլուխը շարժելով ըսաւ:

— Ես ձեզի փորձեցի: Դուք սիրտ ունեցող տղաքներ էք, պարապ բաներէ չէք վախնար: Ես առաջին անգամ է որ այսչափ տը-

ղոց մէջ ձեղի պէս յանդուզն պղտիկներու կը հանդիպիմ, և աստ համար ահա փոխանակ ձեզի իմ տունս տանելու, դարձեալ ձեր մայրիկին քովը կը դարձնեմ: Ո՛րչափ խեղճ, ո՛րչափ դիւրահաւան և տկար են այն տղաքը որ աննչան բանէ մը կը վախնան, կը վախնան նոյն իսկ անանկ բաներէ որ չեն տեսած...: Մարդ մարդ ըլլալու համար քիչ մը սրտոտ ըլլալու է: Ի՞նչ է, մութէն կը վախնաք, լոյսէն կը վախնաք, կատուէն կը վախնաք, շունէն կը վախնաք: Այսպէս, շատ անգամ հեռուէն կը վախնաք ո և է ոչինչ բանէ. բայց երբ յանդգնութիւնը ունենաք անոր քով երթալու, անոր խորը մտնելու, այն ատեն կը տեսնէք թէ բան մը չկայ եղեր հոն: Դուք աղէ՛կ տղաքներ էք և աղէկ մարդիկ պիտի ըլլաք: Ելէք գացէք նայիմ ձեր տունը...

Ամբողջ գիւղը զարմացաւ այս իրողութեան վրայ: Արագիլ-Մամիկը ի՞նչպէս տարեր էր Լեւն ու Ճեւը և ի՞նչպէս բերեր էր: Ա՛լ այդ երկուքը «Արագիլ-Մամին թոռները» կոչուեցան և իրենց անվախութիւնը ամէն ատեն խօսքի նիւթ էր:

Իրաւ ալ գիւղին ամէնէն սրտոտ երիտասարդները եղան այս երկու եղբայրները որոնք երբ վտանգ մը պատահէր, օրինակի համար երբ գազան մը լեռներէն իջնէր գիւղին շրջակայքը, ամէնէն առաջ այդ երկուքն էին որ իրենց որսի հրացանը առած կը վազէին հեռացնելու այդ չարը:

Արագիլ-Մամուն թոռները՝ իրենց գիւղին պաշտպաններն էին:

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Մ Մ Կ Ա Ն Ո Ր Բ Ո Ւ Կ Ը

Ա՛յնքան թոմպուլիկ՝ չեմ տեսած բնա՛ւ.
Պլպստուն աչուին՝ պի՛շ—պի՛շ, բաց—խփիկ,
Բերանիկն էր ճի՛շդ թաւշապատ տփիկ,
Գիրգ հրեշտակի՛կ մ՛էր անի՛ երբ ծնաւ:

Պլպստուն աչուին՝ պի՛շ—պի՛շ, բաց—խփիկ,
Նրբագիծ յօնքերն ալ ա՛յնքան սիրուն՝
Վերեւն յարաշարժ, ծի՛լ—թարթիչներուն,
Որ խնդում սփռէր իր շուրջ—բոլորմիջ:

Բերանիկն էր ճիշդ թաւշապատ տփիկ,
Ուրկէ գեփի՛ւռն իսկ կը շնչէր յաւէտ,

Ճիշերը՝ ճի՛ւ— ճի՛ւ թոչնոց բերկրաւէտ .
Չքնա՛ղ էր անի , և քաղցրահպիկ :

Գիրգ հրեշտակի՛կ մ'էր անի՛ երբ ծնաւ .
Որ՛ համա՛կ հրճուանք՝ կու գար դրախտէն ,
Նոր կեանքի ցոլքե՛ր ցանել դէս ու դէն ,
Հուր ու փա՛յլ ձօնել աչերու խոնաւ :

Բայց , դեռ եօթնամեայ , — մայրիկը մեռաւ .
— Ի՛նչ խուժգուժ հարուած՝ բախտէն անիրաւ .
Ո՛հ , մեռաւ մայրիկն՝ որ մինչև այն օր՝
Ի՛ր գուրգուրանքներ ձօնած էր անոր :

Ծծակն յաջորդեց կեանքոտ ստինքին ,
Ու գգուանքներուն՝ ցաւե՛ր դառնագին ,
Որոնց տարափէն ճժուա՛ծ ծաղիկ ,
Բոյր , թոյր , ամէն ինչ զոհեց՝ խաղաղիկ :

Լուսնթագ , հիմա , տասնամեայ կուսիկ ,
Տխրանոյշ էակ մըն է՝ քնքուշիկ ,
Ցաւերու բովէ՛ն անցած գուարթուն ,
Արդէն փորձաւո՛ւ , լրջամիտ , արթո՛ւն :

Վարձկան ձեռքերով ապրած է ցայսօր ,
Նիհար , նրբանուրբ , այտերն անբոսոր .
Անփոփոխ են սո՛սկ բնազդն ու հոգին
Ու սրտին աւլի՛ յոյզեր կաթոգին :

Բայց երբ հինաւուրց անցքեր կը պատմեն ,
— Մայրիկին խանդոտ խնամքներն ամէն ,
Եւ երէց եղբօր կուրծքէն անբաժան՝
Պայքարնին հանդէպ դաւնութեանց դաժան ,

Լուսնթագ , պի՛շ — պի՛շ ու զարմանահար՝
Ճակտին կը տանի թաթիկը նիհար ,
Ու զո՛ւր կը ջանայ , վերյիշման ճիգով ,
Այդ սիրո՛ղ դէմքեր բերել քովէ քով :

Երանի՛ , սակայն , քոյրի՛կ վշտակէշ ,
Զի՛ չճանչցա՛ր զայն՝ որ կեա՛նք տուաւ քեզ ,
Ու չղգացի՛ր իսկ՝ երբ գնա՛ց ձեռքէդ .
Այդ մե՛ծ — թախիժէն զերծ մնացիր գէթ . . . :

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵՍՆ

ՏԱՍՆՈՑ ՄԸ ԻՆՉՊԷՍ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԸՆԵԼՈՒ Է

(ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ)

Պօղոս. — Ի՞նչ խաղ խաղանք, Պետրո՛ս :

Պետրոս. — Հո՛ւ խաղանք :

Պօղոս. — Ո՛չ :

Պետրոս. — Գնտա՛կ խաղանք :

Պօղոս. — Այո՛, գնդակ խաղանք, անաւասիկ աղուոր տեղ մը :

Պետրոս. — Ուրեմն աճապարենք, ատեն չկորսնցնենք :

(Իւրաքանչիւրը գնդակ մը կը դնէ գետին խաղի սկսելու համար, բայց երկուքն ալ միեւնոյն ատեն հոն նշմարուած տասնոցի մը վրայ կը վազեն) :

Պօղոս և Պետրոս. — Տասնոց մը : —

(Պզտիկ կռիւ մը)

Պօղոս. — (Ուրախութեամբ) Իմ ձեռքինս ի՛մա է :

Պետրոս. — (Տխրութեամբ) սակայն ո՛չ, իմա է, որովհետև աւաջին անգամ ես տեսայ :

Պօղոս. — Ինծի՛ պիտի ըլլայ, իմա է :

Պետրոս. — Ո՛չ, երկուքինս ալ է :

Պօղոս. — Ո՛չ :

Պետրոս. — Այո՛ :

Պօղոս. — Ես աւելի ուժով եմ, հրամմէ՛ եկու առ :

Պետրոս. — Ես դրամի համար չեմ ծեծկուիր, և այն ալ գըտնուած դրամի համար, գողցուած դրամի համար :

Պօղոս. — Գողցուած, գողցուած, ուրեմն ես դո՞ղ եմ :

Պետրոս. — Գտնող մը որ գտածը կը պահէ... գող մըն է. այդ տասնոցը քուկդ չէ :

Պօղոս. — (Մտածելով) Ինծի չվերաբերի՛ր, ճիշդ է :

Պետրոս. — Ահա վարը կարագ, հաւկիթ ու պանիր ծախող կին մը կայ, կը տեսնե՛ս :

Պօղոս. — Այո՛ :

Պետրոս. — Անիկա հինգ վայրկեան եղաւ որ հոն կեցած է, բաւական յաճախորդներու գործ տեսաւ, հաւանաբար այդ տասնոցը անորն է :

Պօղոս. — (Տասնոցին նայելով), — Իրա՛ւ է, կարծեմ թէ կարագի պզտիկ նշան մըն ալ կայ վրան : Ուրեմն այս տասնոցը պիտի տանիմ այդ կնոջ տալու : Ասիկա իմ պարտականութիւնս է, միևնոյն ատեն մենք ալ կուուելու պէտք չենք ունենար :

Պետրոս. — Լաւ ուրեմն, շուտ գնա՛, հոս քեզի կը սպասեմ :

(Պողոս կ'երթայ և քիչ ետք կը դառնայ) :

Պողոս. — (Շնչասպառ.) հաւկթաւածառը ըսաւ ինձի. պղտի'կ, իրաւ է, քիչ մը առաջ իմ պայուսակէս ինկան քանի մը տասնոցներ. շատը ժողվեցի : Այս քու գտածդ անպատճառ իմս է, բայց որովհետեւ դուն շատ պարկեշտ ես, քեզի պահէ ատիկա (ցոյց կու տայ տասնոցը) :

Պետրոս. — Բայց ինձի' :

Պողոս. — Ո՛հ, դուն զիս կը ձանձրացնես, օ՛ն, տասնոցի մը համար նորէն սկսինք մեր կռիւին :

Պետրոս. — Բայց երկուքնուս ալ է ան :

Պողոս. — Սեպենք թէ իրաւունք ունիս, բայց մէկ տասնոց մը ինչպէս կրնանք երկու կտոր ընել :

Պետրոս. — Ինձի տուր տասնոցը, ես պիտի փորձեմ :

Պողոս. — Շա՛տ լաւ (կու տայ) :

(Նոյն միջոցին շաքարավաճառ մը կ'անցնի : Պետրոս կը վազէ դէպի շաքարավաճառը, ցպիկ մը շաքար կը գնէ, յաղթական կը դառնայ դէպի ընկերը. կը կտորէ ցպիկը երկու հաւասար մասերու և կ'ըսէ) բռնէ՛, և տե՛ս թէ ի՞նչպէս տասնոց մը երկու կտոր կ'ընեն :

Պետրոս. — Պաւլօ, շատ լաւ ըրիր : (Տղաք կը մեկնին շաքարները ուտելով) :

ԶԱՊԷԼ ԶՍՔԱՐԵԱՆ

Ի՞ՆՉ ՕԳՈՒՏ ՈՒՆԵՑԱՅ «ԾԱՂԻԿ»Ը ԿԱՐԻՅԱԼՈՎ

Յառաջիկայ շարթու պիտի աւարտի Ծաղիկի տարեշրջանը : Եւ այդ շրջանը ապարդիւն անցած չէ, այլ դեռատի երիտասարդներուն միտքը մշակած է : Ես անձնական փորձառութեամբ կը հաստատեմ թէ, շատ օգտուեցայ զայն կարգալէ թէ՛ մտաւորական զարգացման և թէ՛ ուղղագրական տեսակէտով :

Աշխարհի վրայ երբեք մոռնալու չենք այն սնձը և կամ այն գիրքը որ մեր մտաւորական զարգացման պատճառ եղած է : Ուստի մոռնալու չենք Ծաղիկ շաքարթաթերթը, և երկրորդ շրջանին դարձեալ մեր սիրելի բարեկամը պէտք է դարձնենք զայն :

Իմ խորին շնորհակալութիւնս Ծաղիկի Տնօրէնութեան, որ այս պիտի ձեռնարկ մը ունեցած է, և միշտ կ'աշխատի անոր յառաջդիմութեան համար :

Պարտիզակ

Ծաղիկի ընթերցողներէն
ՀԱՅԿ

ԱՐԱՐԱԾԻ ՄԸ ՀԱՌԱԶԱՆՔԸ

Հունա, վերը հրացան մը կը պայթի, որ կը խանգարէ լեռնե-
րուն վայրի լուսթիւնը՝ անտառը արձագանգելով որոտումներով :
Արդեօք որո՞ւ մահուան բօթն է :

Մտիկ ըրէ՛ք. այն ի՞նչ բան է, որ հոծ ճիւղերը կը ճարձա-
տեցնէ ու կը հալածուի տագնապով ու անձկութիւնով. հիմա ա-
կանջները տնկած դետակի մը եղերքը կ'սպասէ : Ո՛հ, վիրաւոր
եղջերու մըն է :

Տե՛ս, ի՞նչպէս անոր ձկուն ոտքերը կը դողդղան. ի՞նչպէս կը
բարախէ անոր կուրծքը շնչասպառ, իր
գեղեցիկ ու խոշոր աչքերով կը կուսնէ
անգութ, դառն մահը :



Անգամ մըն ալ մարած աչքերով
մը կը դիտէ իր սիրական ան-
տառն ու արշաւի սահմանները, ո-
րոնց մէջ կը գտնուի նաև իր թա-
քըստոցը :

Կը փորձէ փախչիլ լեռան կողմ ի վեր, որուն վրայ կը ցան-
ցընէ իր արեան հետքերը, և ողբի հառաչներով կը փռուի ոտքե-
րուս առջև . . . :

Այն օրէն ի վեր չեմ կրնար յիշողութենէս հեռացնել վիրաւոր
եղջերուին սրտին խորերէն արձագանգող աղեկէզ հառաչները :

ՄամուրէՍ-Իւ-Ազիզ

ՄԿՐՏԻՁ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք, Գեր. Տ. Եղիշէ Եպսկ. Դուրեանի Բառագիտու-
թիւն կամ Ուրբ Մասունք Բանի հայերէն ֆրանկանոթեան գործին
երրորդ տպագրութիւնը : Գրաբարի ուսուցման այս գեղեցիկ գործը
որուն հրատարակիչն է Պալենց գրատունը, լաւագոյն ընդունելու-
թիւն մը գտած է արդէն մեր նախակրթարաններուն մէջ : Գին 5 ղշ.

Պալենց գրատունը երկրորդ տպագրութեամբ՝ հրատարակեց իր
Նոր Վարժութիւն Մանկանց դասագիրքը, երկրորդ տարի : Դպրո-
ցական ընթերցանութեան գիրք մը հրահանգներով և հարցումներով :

Այս նոր հրատարակութեանց առթիւ պարտք կը համարինք
յիշեցնել թէ Պալենց գրատունը այսօր կարեւոր տեղ մը կը զբաւէ
մեր հրատարակիչ-գրավաճառներուն մէջ, իր դասական բաղմազան
ու խնամեալ երկերով, որոնց թիւը պիտի ստուարանայ մօտերս
հրատարակելի գործերով, ամենքն ալ հեղինակաւոր մասնազէտնե-
րուն կողմէ պատրաստուած :

ԲԱՂԳ ԵՒ ԳՈՐԾ

—→→→000←←←—

(ԱԶՍՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԳՎԻԵՐԷՆԷ)

Այո՛, ես բաղդն եմ,
Բայց, ո՛վ երիտասարդ,
Մի՛ սպասեր ինձի
Որ քեզի գամ.
Դուն պէտք է որ ծոխս
Ստանալու համար բաղդդ:
Գործէ՛ ձեռքով, սրտով և գլխով,
Ինչպէս որ կ'ընէ այն մարդը
Որ կը հասկնայ
Թէ՛ անոնք որ կ'սպասեն,
Յուսալով վարձատրութիւն մը բաղդէն.—
Կամ պատեհութենէն, ինչպէս որ կ'ըսեն.—
Կը գտնուին միշտ ամէնէն յետին
Աղքատներուն մէջ ալ:
Ոսկեղէն ամանը
Անոր համար չէ՛ որ կը կենայ
Ձեռքերը ծալլած,
Յուսալով որ ես
Իր անգործութեան պիտի օգնեմ:
Ես գործօն մտքին կ'օգնեմ,
Տեսնող աչքին,
Պատրաստ ձեռքին
Որ զիս կը բռնէ անցած ատենս,
Եւ ինձմէ կ'առնէ
Բարին որ ունիմ՝
Ամէն հոգիի համար
Որ զօրաւոր և բարի է:
Չսպասեր բաղդին
Ան որ՝
Չիս կը յափշտակէ,
Չի ես բաղդն եմ, —
Պատեհութիւն և ճակատագիր,
Անկիւնի քարը
Ինչ որ մեծ է
Մարդու և կազմակերպութեան մէջ:

Բայց ես ասոնցմէ ոչ մէկն եմ
 Անոր համար՝ որ զիս չի բռներ:
 Ես բռնուելու եմ,
 Եթէ բարիք ստանալ կ'ուզէք
 Իմ ունեցած գանձերէս:
 Այո, ես բաղչն եմ. ես մեծ եմ.
 Երբեմն ուշ կու գամ
 Բայց մի՛ սպասեր ինձի.
 Աշխատէ՛, գիտէ՛,
 Բարի ձեռքեր, բարի սիրտ ունեցի՛ր,
 Եւ օր մը պիտի տեսնես
 Քու ջանքիդ հորիզոնէն՝ ծագիլը
 Բաղդին կամ հարստութեան:

Մ. ԲԱՐԹԻԿԵԱՆ



ԿԵՆԳԱՆԻՆԵՐՈՒ ԱՇԵԱՐՉԷՆ

Մ Ո Ղ Է Ս Ը

Մողէսները մանր սողուններ են, որոնք արտաքին տես-
 քով կոկորդիլոսներու շատ կը նմանին, բայց անոնցմէ շատ
 փոքր են. չորս կարճ ան-
 դամներ ու երկայն պոչ
 մը ունին՝ որ գլանաձև ու
 սրածայր է. և եթէ այդ
 պոչը կտրենք ու զատենք,
 անոր տեղը նորէն կրնայ բուսնիլ: Մողէսները գրէթէ առ-
 հասարակ ողջ որսերով կը սնանին, ընդհանապէս միջատ-
 ներն են անոնց սնունդը. իսկ մեծ տեսակները կը յարձա-
 կին փոքրիկ ստնաւորներու և թռչնիկներու վրայ: Մողէսները
 ամառը կ'երեւին, վախկոտ կենդանիներ են, թոյն բնառ-
 չունին և մէկու մը չեն վնասեր. պէտք չէ վախնալ անոնցմէ:
 Ինչպէս ամէն սողունները ձմեռ ատեն կը թմրին, նմանա-
 պէս մողէսներն ալ ձմեռը հասնելուն՝ ցուրտի չդիմանալով,
 կը մտնեն գետնին խորը և հոն թմրած կը մնան:



ԸՆԴԴԻՄԱԲԱՆ ՏՂԱՆ

Կը ճանչնամ տղաք որոնք հաճոյք կ'զգան
ամէն առիթի ընդդիմանալ իրենց ընկերներուն :
Երբ կը տեսնեն որ տղայ մը կուլայ կամ
բարկացած է , կ'երթան դէմը կը կենան , հա-
զար ու մէկ ծամածուծ թիւններ ու քաշքըռ-
տուքներ կ'ընեն , և ալ աւելի կը բարկացնեն
դայն :

Հայրապետ այս գէշ թերութիւնը ունի :
Դիմացինը կը նեղէ , կը նեղացնէ և կը զայ-
րացնէ : Հայրապետ երբ այդ ընթացքը բռնէ
լաւ նկարագիր ունեցող տղոց հանդէպ , չա-
րիք մը առաջ չի գար , քանի որ լաւ նկարա-
գիր ունեցող տղաք ասանկ բաներէ չեն առ-
նուիր : Բայց շատեր ալ կան որոնք չեն կրնար
տոկալ անոր ընդդիմութիւններուն և կը զայ-
րանան : Ահա այն ատեն կուիւ մըն է կը փրո-
թի : Իրարու կը փաթտուին , իրար կը ծեծեն
և ետքը երկուքը մէկ կը պատժուին ու
սուցիչէն :

Հայրապետ ամէն ատեն ուժով չի փրթիր .
երբեմն ալ փառաւոր ծեծ կ'ուտէ , վրան
գլուխը կը պատռի և միտերը կը ճմլուին : Այն
ատեն իր կարգին կուլայ , և մարդ չի միտ-
թարեր դայն , քանի որ իր ընդդիմաբանու-
թիւններուն արդար պատիժը կը կրէ :

ՊԻՍԱԿՈՒԱԾ ԿԱՊԸ



(ԱՆԳԼԻՒԱՑԻ ՆՇԱՆՍԻՈՐ ՈՍՑԻԿԱՆ
ՇԷՐԼՕՒՔ ՀՕԼՄՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԷՆ)

— Աւանդ (պատասխանեց մեր այցելուհին) իմ վիճակիս սոսկուժը անկից կու գայ որ վախերս չա՛տ տարտամ են և կասկածներս չա՛տ տկար հիմերու վրայ դրուած . պիտի ըսեմ նաև ա՛յնքան տղայական , քանի որ իմ խոստովանութիւններս լսող բարեկամս ջղային յիմար կնկան մը երեւակայութիւնները կը նկատէ զանոնք : Այս բանը չըսաւ բարեկամս բայց գուշակեցի իր մխիթարական պատասխաններէն և գթալիր ակնարկներէն : Բայց պարոն Հօլմս , ինծի ըսին թէ դուք կարող էք մարդկային հոգիին խորը կարգալ . գուցէ պիտի կրնաք խորհուրդ մը տալ ինծի՝ սպառնացող վտանգներուն առջեւ :

— Ամբողջ ականջ կտրած եմ տիկին :

— Անու՛նս Հէլէն Սթօնըր է . կ'ապրիմ իմ խորթ-հօրս քովը որ վերջին շառաւիղն է Անգլիոյ ամենահին Սաքսոն ընտանիքներէն՝ Սթօք-Մօրանի Բոյլօթներուն . այս ընտանիքը կը բնակէր Սըրրէյի արեւմտեան սահմաններուն վրայ :

Հօլմս գլխու նշան մը ըրաւ և ըսաւ .

— Այդ անու՛նը ինծի ծանօթ է :

— Այս ընտանիքը միջոց մը Անգլիոյ ամենահարուստներէն եղած է , և իր ստացուածքները կը տարածուէին մինչև հիւսիս , Պէրքչայրի մէջ , և արեւմուտք՝ Հէմքչայրի մէջ : Բայց , վերջին դարուն , անառակ և շռայլ չորս սերունդներ իրարու յաջորդեցին և այս մեծ տունը վերջապէս կործանեցաւ խաղամուկ մը : Իրենց հողէն բան մը չէր մնացած , բաց ի քանի մը արտավար տեղէ և իրենց տունը երկու հարիւր տարուան հին՝ աւանդ ձգուած էր : Վերջին տան-տէրը կործանած ազնուականի իր թշուառ կեանքը քաշքըռտեց հոն , բայց իր միակ զաւակը՝ իմ խորթ-հայրս , հաշիւ ըրաւ որ պէտք էր քաշուիլ հոնկէց . ազգականէ մը գումար մը փոխ առաւ բժշկութիւն սովորելու համար և մեկնեցաւ Կալիֆօրնիա , ուր իր ճարտար արհեստին և նկարագրի ուժին շնորհիւ , շատ լաւ յաճախորդներ չահեցաւ : Օր մը իր տունէն գողութիւն մը գործուած էր . բար-

կութենէն յարձակեցաւ իր Հնդիկ մատրանապետին վրայ և չղայն սպաննեց. հազիւ կրցաւ մահուան վճիռէ ազատիլ և տարիներով բանտը մնալէ ետք Անգլիա եկաւ դժնէ ու թթուած դէմքով :

«Տօքթօր Բօյլօթ Հնդկաստան գտնուած պահուէն ամուսնացած էր մօրս հետ, տիկին Սթօնըր, որ անկէց առաջ ամուսնացած էր Պէնկալի հրետածիգներու հաղարապետ Սթօնըրի հետ և անոր մեռնելովը՝ այրի մնացած էր դեռ երիտասարդ : Քոյրս՝ Ժիւլիա և ես երկուորեակ էինք, և երկու տարեկան էինք այս երկրորդ ամուսնութեան ատեն : Մայրերնիս հարուստ էր. հաղար ոսկի հասոյթ ունէր, և իր հարստութիւնը կտակեց տօքթօր Բօյլօթի, որպէս զի ան մեզի իր քովը պահէ, պայմանաւ որ երբ ամուսնանանք, մեր իւրաքանչիւրին տայ որոշ հասոյթ մը : Մեր Անգլիա վերադառնալէն քիչ ետք, մայրս մեռաւ Քրէուէի մօտ երկաթուղիի մը արկածի զոհ երթալով : Անկէց ի վեր ութը տարի մը կայ : Այդ վայրկեանէն սկսեալ տօքթօր Բօյլօթ ո և է ջանք չըրաւ յաճախորդ շահելու Լոնտոնի մէջ, և մեզի իրեն հետ տարաւ Սթօք Մօրանի հին տունը : Մօրս թողած հարստութիւնը լիառատ կերպով կը բաւէր մեր բոլոր պէտքերուն, և ո և է արգելք չէր երեւար մեր երջանկութեան :

«Բայց յանկարծ մեր խորթ հօր նկարագիրը ահռելի կերպով փոխուեցաւ : Փոխանակ բարեկամներ շահելու և այցելութիւններ փոխանակելու դրացիներուն հետ, որոնք նախ շատ ուրախացան տեսնելով որ Բօյլօթ մը կը հաստատուի իր ընտանիքին հին բնակարանին մէջ : Բայց հայրս իր տունը փակուած կը մնար, և միայն դուրս կ'ելլէր վայրագօրէն կռուելու համար իր ճամբուն վրայ գրտնուած մէկու մը հետ : Դեռ անցած չարթու, բարձրաւանդակի մը վրայէն վար գետը նետեց երկաթագործ մը և ես հանրային գայթակղութիւն մը չարթնցնելու համար զոհին ընտանիքին տուի որչափ որ դրամ կրցի հաւաքել : Բնաւ բարեկամ չունի. իր միակ բարեկամներն են գնչուները. կը թոյլատրէ այդ աւազակներուն որ վրան կանգնեն մոռմենիներով ծածկուած իր հողերուն մէջ : Ասոր փոխարէն ինք ալ կը հիւրասիրուի անոնց վրաններուն մէջ և երբեմն շաբաթներով կը ճամբորդէ անոնց հետ : Մասնաւոր սէր մըն ալ ունի կարգ մը հնդկական կենդանիներու համար, որոնք իրեն կը զրկուին թղթակիցէ մը. այսպէս, հիմա խորթ հայրս ունի յովազ մը և պզտիկ կապիկ մը որոնք ազատ համարձակ կը պտտին և գեղացիները անոնցմէ կը վախնան, ինչպէս կը վախնան անոնց տիրոջմէն :

(Շարունակելի)

Մ Տ Ք Ի Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Հանեղուկ թիւ 51

Վարը կը դնենք վեց բառեր. անոնցմէ մէյմէկ գիր պակսեցընելով պէտք է քովէ քով շարել, որմէ կազմուի տեսակ մը ձիու անուն: Իսկ բառերուն մնացած գիրերէն ալ պէտք է կազմել ուրիշ վեց բառեր: Ահաւասիկ բառերը. — Կազմ, արմատ, տրամ, բողոք, յորի, բողոք:

Հաշուական հարցում թիւ 50

Սենեակ մը 5 կանգուն երկայնութիւն, 3 կանգուն լայնութիւն և 3.3 կանգուն բարձրութիւն ունի. քանի՞ խորանարդ կանգուն օդ կրնայ պարունակել:

Պատասխանները պէտք է համին մինչև առաջիկայ հինգշաբթի առտու և գրուած պէտք է ըլլան կողքին վրայի կտրօնին վըրայ: Լուծողներէն մէկը վիճակով պիտի ստանայ՝ եթէ մանչ ըլլայ՝ Օ. Արզուման հրատարակութենէն ինչ պէտք է գիտնայ դեռասի մանչ մը, իսկ եթէ աղջիկ ըլլայ՝ ինչ պէտք է գիտնայ դեռասի աղջիկ մը, որոնք շատ մը լեզուներու թարգմանուած են և որուն անգլիերէն բնագրէն ցարդ սպառած է 1,500,000 օրինակ:

Թիւ 50 հանեղուկին յուժումն է.

ՀԱՅԲ = այր = այ = հայ = աւ = Ա.

Թիւ 49 հաշուական հարցումին պատասխանն է. —

Սենեակին տարածութիւնը 18 մէթր է, և զայն գորգով ծածկելու համար պէտք վճարել $301\frac{1}{2}$ զրուշ:

Ճիշդ լուծողներն են. —

Պեշիկբաշի Ազգ. վարժարանէն՝ Ս. Գազազեան, Սիրվարդ, Յ. Ունճեան, Վարդ, Յ. Մարտիկեան, Վ. Փափազեան, Հ. Դանիէլեան, Տնտես Յ. Ազատեան, Տնտես Գարեգին, Ս. Փափազեան, Ա. Մատթէոսեան, Յրիտրիս, Գ. Կ. Մուրատեան, Հ. Փիլթօֆճեան, Սիրան, Ա. Պոյանճեան, Պ. Եղաճեան, Ն. Թուրումպաճեան, Ն. Աքիլեւեան, Ա. Սարրաֆեան, Ա. Սարգիսեան, Մ. Բիւրքճեան, Լ. Թաթարեան, Ս. Շահպետէրեան, Ա. և Ա. Պոռուճեան, Հ. Պողոսեան, Գ. Պաղտասարեան, Յ. Գըլըճճեան: Բերայի Համազգեսց վարժարանէն՝ Ն. Արեւեան, Ի. Աղնաւորեան, Ա. Մազլմեան, Է. Աւագեան, Ն. Պապեան, Մ. Կէտիկեան, Յ. Կամսարեան: Բերայի Էսաեանէն՝ Զ. Լուսարարեան, Ատա-

նացի Ռերեկա, Հ. Աճէմեան, Ա. Պետիկեան, Կ. Վէզիրեան :
 Վիեննական Մխիթարեանեան՝ Ն. Աճխունի, Ս. Ոսկիանեան, Պ.
 Ոսպունի, Հ. Սուրէնեան, Ա. Ճինճեան : Տեմիրեան վարժարանեան՝
 Ս. Ժամկոչեան, Գ. Պաքալեան, Բ. Յակոբեան, Մ. Տէմիրեան,
 Պ. Թազուորեան : Գաւրգիւղեան՝ Ո. Տ. Եուսուֆեան, Զ. և Ռ.
 Մեստուաճեան, Զ. և Ե. Մարլեան, Ասոճաքիօնիսդ վրժ.էն՝ Ս.
 Էնքսէրճեան : Մագրիգիւղեան Ա. Խանամիրեան, Գ. Խանամիրեան,
 Գ. Աղապէկեան : Սամաթիայեան Յ. Պիլէզիկճեան, Յ. Համար-
 ձուճեան : Խազիւղեան Յ. Պալըքճեան, Վ. Աստուածատուրեան,
 Մ. Հիւրմուզեան, Հ. Մէրոփնեան : Կեդր. վարժարանեան՝ Վ. Գա-
 ղանճեան : Պեղեան վարժարանեան՝ Հ. Գալֆեան : Մայր-վար-
 ժարանեան՝ Ա. Սինէմճեան : Օրբագիւղեան՝ Տ. Փանոսեան : Ենի-վա-
 հաղլեան՝ Վ. Կիւմլիճեան : Բագրատունի վրժ.եան՝ Մ. և Տ. Դա-
 ղարոսեան : Նանու Նէլլի Տէրունեան, Գ. Յովակիմեան, Պէաղրիս
 Բէհլիվանեան :

Գոնիայի ձեռնարանեան վարժարանեան՝ Ն. Վարդանեան, Յ. Պա-
 լապանեան, Կ. Յ. Սարրաֆեան, Վ. Պալապանեան, Կ. Գ. Սար-
 րաֆեան, Գ. Մասատեան, Գ. Գալղիմալեան, Յ. Զօփուրեան,
 Վ. Զուլլուեան, Ե. Զօփուրեան, Զ. Պէրպէրեան, Յ. Զուլլու-
 եան, Թ. Կոստանեան, Պ. Բըրքեաշարեան, Լ. Գասարճեան :

Նիկոմիդիայեան՝ Ե. Նաքքաշեան, Վ. Զափեան, Ե. Մուրատեան,
 Ե. Զոպանեան, Հրանդօֆ, Թ. Դաղարոսեան, Ս. Բէօսէեան, Դ.
 Դաղարոսեան, Լ. Կուլեան, Ե. Հովիւեան, Գ. Փաթթուքեան,
 Կ. Թերղեան, Ե. Կարպիսօֆ, Պ. Ճամճեան, Օ. Մոսկոֆեան, Ն.
 Տ. Ներսէսեան, Յ. Յոփանեան :

Պարսիգակեան՝ Մ. Անտոնեան, Հ. Դէմնէսիոտեան, Ա. Կղտալ-
 եան, Տ. Կիւլմէզեան, Կ. Բարաղամեան, և Բարձր. վարժարանին
 աշակերտները : Էսթրնեան Կրպ. Պարզեւուհի և Զարուհի Փափազ-
 եան : Օվանըֆեան Ազգ. երկսեռ վարժարանի աշակերտները : Պրու-
 սայեան՝ Վարդգէս Տ. Բարթոլ : Ինկայօլուեան՝ Սերովբէ Սահակեան :

Վիճակը շահեցան Խազիւղեան Յակոբ Պալըքճեան և Բերայի
 Համազգեացեան Իսկուհի Աղնաւոր, որոնք կ'ստանան խոստացուած
 գիրքերը :

Մ Ի Ա Յ Ն Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր Ո Ի Հ Ա Մ Ա Ր
Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ Գ .

Երկու ծայրէս զեղչեցին,
 Իր մը եղայ հաւնոցին.
 Ամէն ծաղիկ մրցակից,
 Շատ գոհ եղան անկսկիծ :
 Տղաք, ըսէ՛ք, ի՞նչ էի ես,
 Հիմա ի՞նչ եմ իրապէս .

Չորս շաբաթ պայմանաժամ.
Հետեւեալ գիրքերէն մէկը ուղելու իրաւունք ունի այն՝ որու
եւած է վիճակը և որուն անունը հրատարակուած է Ծաղիկի մէջ. —

Օսմանեան պատմութիւն Մ. Աշճեան :

Արհեստական իրագիտութիւն :

Առողջապահութիւն :

Զրուցատրական ղեկերցարան :

Երկրաչափութիւն տարրական :

Կ. Պոլիս

Գրականաւ

Մերձան փողոց Թիւ 57,

ՎԱՀՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԱՆ

Հանելուկը լուծողները կրնան կանխաւ գրել ուղած գիրքերնուն
անունը :

Պատասխանները պէտք է գրել կողքին ետեւի մեր սովորա-
կան կտրօնին վրայ :

«ԾԱՂԻԿ» ԵՒ ԴՊՐՈՅՆԵՐԸ ԿԱՐԴԱՆԱԿԱՆ ԿՈՂՔԻՆ ՎՐԱՅ

«ԾԱՂԻԿ» ԵՒ ԴՊՐՈՅՆԵՐԸ

Ահաւասիկ ցանկը անցած ամիս այլևայլ վարժարաններու բո-
լոր դասարաններուն մէջ Ա. Բ. Գ. հանդիսացող աշակերտներուն
և աշակերտուհիներուն :

ՍԱԿԸՁ ԱՂԱՃԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ, ՎԱՐԺԱՐԱՆ. — Գ. դասարանեկ՝
Ա. Թորգոմ Չուպուքճեան, Բ. Նիկողայոս Սվաճեան, Գ. Եղիա
Աստուածատուրեան :

ՊԵՇԻԿՍԱՇԻ ԱՁԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Տարրականեկ՝ Ա.
Գէորգ Պաղտասարեան և Աննիկ Վարդերեսեան, Բ. Յակոբ Քէ-
լէկեան և Հռիփսիմէ Գըլըճճեան : Գ. Յակոբ Գըլըճճեան և Մարիամ
Քիւրքճեան :

ԲԱՔԵՐԴԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ, ՎԱՐԺԱՐԱՆ. — Ե. կարգեկ՝ Յովհ.
Տ. Յովհաննէսեան, Արիստակէս Ղազարեան և Արշակ Իսրայէլեան :
ՍԻՄ-ՀԱՃԻ ԳԻԻՂԻ ԱՁԳ. ՊԱՐԹԵՒԵԱՆ, ՎԱՐԺԱՐԱՆ. —
Բարձր. Բ. կարգեկ՝ Ա. Գարրիէլ Սօլաքեան, Բ. Արամ Փէհլի-
ճեան, Գ. Վարդան Նօրեկեան :

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՌԵԻՏՐ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Ա. կարգեկ՝ Յակոբ
Էսմէրեան, Վահէ Ալաճաճեան, Պերճուհի Անսուրեան, Արմենուհի
Վարդեան : Մանկապարտեղեկ՝ Յարութիւն Մարգարեան, Վահէ Կո-
րիկեան :

ԷՏԻՐՆԵՒ ԱՁԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Բարձր. Ա. կարգեկ՝ Մարի
Մ. Պղտիկեան, Համբարձում Կ. Գասպարեան, Կարապետ Լ. Քեա-
թիպեան, Հրանտ Կ. Բանթիկեան :

ԳԱՍԹԷՄՈՒՆԻ ԱՁԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Գ. դասարանեկ՝ Ա.
Օննիկ Եիւզպաշեան, Բ. Երուանդ Սէֆէրեան, Գ. Կարապետ Սար-
եան և Ղեւոնդ Պրուսալեան : (Շարունակելի)

“ԾԱՂԻԿ”Ի ՆՈՐ ՏԱՐԵԾՐՋԱՆԸ

Այսօր կը հրատարակուի Ծաղիկի իբր Մանկանց Հանդէս հրատարակութեան 50րդ թիւը, որով երկու շաբաթէն կը մտնէ իր երկրորդ շրջանին մէջ:

Տարեշրջանին այս վերջաւորութեան առթիւ պարտք կը համարինք շեշտել թէ Ծաղիկի Տնօրէնութիւնը բացարձակապէս որոշած է շարունակել տղոց և դպրոցականներու նուիրուած այս հանդէսը, և մտադրած է աւելի կատարելագործել ու զարգացնել զայն:

Միւս կողմէ պարտք կ'ըզանք յիշեցնել մեր այն բաժանորդներուն, — որոնք դեռ չեն վճարած իրենց պարտքը — անմիջապէս ուղարկել իրենց բաժնեգինը որուն փոխարժէքը ամբողջովին առած կը համարուին արդէն: Կը խնդրենք նաև մեր գործակալներէն որ ցարդ իրենց հաւաքած բաժնեգինները, ինչպէս նաև անգանձելի մնացածները հաւաքելով առաջին առթիւ ղրկեն մեզի: Հաշիւներու այս փակումը անհրաժեշտ է, քանի որ մօտ օրէն Ծաղիկի տարեշրջանը պիտի նորոգուի և այն ստեն պիտի պարտաւորուինք զագրեցնել թերթերը մեր այն բաժանորդներուն և գործակալներուն, որոնք անյնող տարեշրջանին պարտքը չեն վճարած:

Վստահ ենք որ մեր այս խնդիրքը արդիւնաւոր արձագանգ մը պիտի գտնէ և հարկ չպիտի մնայ առանձին առանձին ամէնուն յիշեցնել իր պարտաւորութիւնը:

Այժմէն բացուած է նաև Ծաղիկի Բ. Շրջանին բաժանորդագրութիւնը: Պոլիս և գաւառները տարեկան 30 դրուչ, և արտասահման 7 ֆրանք:

Բաժնեգինները կարելի է ղրկել մանտա-բօսթով, նամակագրոյժով կամ փոխ-գրով:

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ՝ ազգային, գրական եւ ֆաղսֆակսն, — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրչ., Ճամսեայ 45 դրչ., գաւառներու համար 108 դրչ. Ճամսեայ 60 դրչ. և օտար երկիրներու համար 35 ֆր. Ճամսեայ 20 ֆր.: Զեռքէ վաճառում՝ ՏԱՂԻԿ: Մնամեալ բովանդակութիւն, ընտիր յօդուածներ, թարմ լուրեր ու նորագոյն տեղեկութիւններ: ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՛ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօրումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմին իր մասնադիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական և այլն, բաց ի գրական ու բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ: ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն և բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էՖ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիյէ Ճատտէսի ուր կը գտնուին թերթին տպարանն ու խմբագրատունը:

ՄԱՆՁՈՒՄԷ Պատկերազարդ Օրաթերթ առաւօտեան: Գա-
ղաքական, դրական, գիտական, ազգային
և տնտեսական: Տարեկան բաժնեդիրն է Պոլսոյ համար 80, գա-
ւառաց համար 108, իսկ վեցամսեայ Պոլսոյ համար 50 և գաւա-
ռաց համար 60 զրուշ: Ձեռքէ՝ հատը 10 փարա: Մանզումե ամէ-
նէն ժողովրդական օրաթերթն է Պոլսոյ, իր հաճելի և պէսպիսու-
թեամբ լեցուն բովանդակութեան համար: Բացի ամենօրեայ խմբ-
բագրական, եկեղեցական, դրական, տնտեսական և այլ յօդուած-
ներէ, քաղաքական, ազգային և ներքին ճոխ լուրերէ, չորեք-
շաբթի և շաբաթ օրերը կը հրատարակուի առևտրական և գրա-
կան յաւելուածական էջերով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԻՐ ՏԵՍՆԿԻՆ ՄԷՁ ԵՉԱԿԱՆ

ՀԱՅ. ՕՍՄ. ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

Պատճառական, գիտական եւ այլ կարեւոր բառերու
Ֆրանսերէնով եւ բազմաթիւ օրինակներով
հոխացած իբր 50,000 բառ, ոն, առուքիւն

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԼԵՆ. ԿԱՐԱՊԵՏՎԱՆԻ

Օգնական Պետական Խորհրդոյ և Տնօրէն Պէրպէրեանի վարժարանի

Սոյն երկասիրութեան վրայ երկարագրել աւելորդ է, միայն
սա չափը ըսենք որ Ա.Մեն. Ս. Պատրիարք Հօրմէն և Գեր. Եղիշէ
եպս. Դուրեանէ զատ Թուրք և Հայ նշանաւոր գրագէտ լեզուա-
բաններէ գնահատականներ կան այս խղճամիտ և յոգնավաստակ
երկասիրութեան սկիզբը, ի մէջ այլոց Թուրք նշանաւորագոյն գրա-
գէտ-բանաստեղծ է. քրէմ պէյ, Բէշատ պէյ, Ա.ճէտ Բասիմ պէյ,
հայագէտ Սիւրէեա պէյ, Պատրիարքարանի Թուրք դիւանապետ
տաճկագէտն Կարապետ էֆ. Խաչատուրեան և արեւելագէտն Ստե-
փան էֆ. Կուրտիկեան Թուրքերէն գնահատականներ ունին: Հայե-
րէն գնահատականներ ունին Գուրգէն, Զօհրապ, Ելքէնճեան, Ու-
ղուրիկեան, Հրանտ Ասատուր, Փանոսեան, Թէոդիկ, Գաղանճեանի
պէս բանասէրներ և գրագէտներ: Սոյն երկասիրութիւնը ունի 900ի
մօտ հոծ էջեր, 8 փունթօ գրով շարուած. ձօնուած է ուսուցչա-
պետ Ռ. Յ. Պէրպէրեանի, կը պարունակէ հեղինակին մեծաղիր
լուսանկարը:

Թուղթ ընտիր, տպագրութիւն ընտիր (Տէր-Ներսէսեան և Պէր-
պէրեան), կաղմ փառաւոր (Մատթէոսեան): Կը վաճառուի կան-
խիկ 35 զրուշի: Միակ կեղրոնատեղի Պալէնց գրատուն:

Լուծում թիւ 51 հանկուկին և հարցումին.